


3690

Лицейский

Ингризский



1934р.

Հ Ա Խ Ա

ՀԵՌԱԿԱ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍԻՏՈՒՏԻ

Հ Ա Գ Ե Բ Ա Ր Ա Ւ Թ Յ Ա Խ Ա

ԱՊԱԶԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 1

Մ. ՄԱԶՄԱՆՅԱՆ



1934 թ.

ՀՐԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ն Ե Բ Ա. Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մանկավարժական աշխատանքի հիմքում լնկած և ուսուցչի և աշակերտի փոխարարերությունը: Դպրոցը ոժանդակում և աշակերտին ավելի սիստեմատիկ ճշգրիտ ծրագրված ու ռացիոնալ ձեվով ստանալու գիտելիքների այն համապատասխան չափը, վոր անհրաժեշտ և տվյալ աշակերտին պոլիտեխնիկ և հետազում մասնագիտական պատրաստականություն ձեռք բերելու համար: Այպիսով մանկավարժի հիմնական նպատակն է յելնելով պրոլետարիատի գիտատուրավի գասակարգային սկզբունքներից ռացիոնալ նպատակարձարձար ձեվով-տալ աշակերտին անհրաժեշտ գիտելիքները: Մանկավարժը աղջում է յերեխայի վրա նրա պահիկայի միջոցով, դրա համար ել մանկավարժի համար չափազանց անհրաժեշտ և այն բոլոր յերեխութների հետ ձանոթանալը, վորոնք հոգեկան են կոչվում: Ճանաչիլ յերեխայի հոգին, դա նշանակում է հասկանալ յերեխայի մտավոր զարգացման աստիճանի տարբեր հասակներում յուրորինակ լինելը, դա նշանակում է ծանոթանալ յերեխայի բնագործության, զգայնության հմոցիոնալ սփերային, ինտելեկտի, հիշողության, ըմբռնման և մի շարք այլ յերեխույթների հետ: Մանկավարժը պետք է ամենից առաջ պարզ պատկերացնի այն որդանիզմի հոգեկան կյանքի ամրողությունը և այդ ամբողջականության մասնակիությունը, վորի վրա ուղղում է նա ազդել:

Իհարկե հոգեբանությունը մանկավարժություն չե: հոգեբանության առարկան ունի իր առանձնահատուկը: Հոգեբանության տվյալներն ոգտագործում են և գեղարվեստի (գրականություն, յերաժշտություն, նկարչություն, թատրոն և այլն) և ճարտարագիտության և բժշկության, և գատական, և արդյունաբերության (ավարիա, տրավմատիզմ, հոգնածության խնդիր, պրոֆեսիալի ընտրություն) և այլ բնագավառներում: Պահանջների հարկե գոչ մի դեպքում չի կարող փոխարինել մանկավարժությանը և մանկավարժական յեղբակացություններ տալ: Մենք

Երշարծկամի Տպարան Վագ-
պատում, Գլավիլու 451-
Պատվեր 85 Տիրաժ 2000

33039

միայն—հապատակ ենք դնում, ծանոթացնելով ուսուցչին հոգեւրանական պլոցիսների հետ, ոգնել նրանց ավելի ուսցիսնալ հիմքերի վրա դնելու մանկավարժական աշխատանքը: Այդ պատճառով ել մենք կաշխատենք մեր կուրսի ընթացքում ծանոթացը նել վոչ միայն ընդհանուր հոգեբանության հիմունքների հետ, այլ և վորոշ չափով կտանք այդ հիմունքների մանկավարժական մեկնաբանությունը:

Նախ բան բուն նյութին անցնելը մենք ուզում ենք մեր ուսկնդիբների ուշադրությունը հրավիրել և մի այլ խնդրի վրա: Չնայած նրան, վոր Մարքսիզմի հիմնադիբների, Մարքսի, Ենգելի, Լենինի, Ստալինի կողմից տրված են մարքսիստական հոգեբանության մեթոդոգիրական հիմունքները, նշված են դիալեկտիկական մատերիալիզմի սկզբունքներով կառուցվող հոգեբանության ուղիներն ու խնդիրները, մենք դեռ չենք կարող պարձենած վոր արդեն լրիվ չափով մշակված ու պատրաստ և այն գիտությունը, վորը հոգեբանություն և կոչվում: Մարքսիստական հոգեբանության կողմից բավականին աշխատանք և տարված դատելու հոգեբանությունը Մարքսիզմի հետ վոչ մի առնչություն չունեցող խորթ իդեալիստական մեխանիստական ու Տրոցկիստական տարրերից հանուն—զտարյուն՝ մարքսիստական հոգեբանության: Չնայած դրան հոգեբանության ֆրոնտի մի շարք կոնկրետ խնդիրներ ու պրոբլեմներ դեռ նոր են լուծվում, մարքսիստորեն հիմնավորվում: Բացի դրանից դեռ քիչ աշխատանք և տարված հոգեբանության ասպարեզում բուրժուական գիտությունների նվաճումները քննադատորեն յուրացնելու ընկ. Լենինի հայտնի ցուցումների իրագործման համար, Բավական և ասել, վոր մինչեւ այժմ դեռ ևս հրապարակում չունենք թեկուղ քիչ թե շատ չափով Մարքսիզմին մոտեցող վորևէ դասագիրք կամ գոնե հոգեբանական մի շարք խնդիրներ ընդգրկվող աշխատասիրություն: Պարզ ե, վոր այսպիսի պայմաններում իրարկեմնք յերեք մեր առաջ չելինք կարող խնդիր դնել տալ մարքսիստական հոգեբանության լրիվ դասընթացը: Մեր նպատակը շատ պելի համեստ ե: Ծանոթացնել մեր ուսանողներին հոգեբանության առարկայի ու ելության հետ: Ոգտագործելով այդ բնագավառում յեղած հատ ու կինտ մարքսիստական գրականությունը և վորոշ խնդիրներում ել ինքնուրուցն մոտեցում հանդես բերելով հոգեկան վորոշ յերեվուկթների դիալեկտիկ մատերիալիզմի տեսակետից մեկնաբանելու համար:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ.

Հոգեբանությունը պատկանում և սոցիալական գիտության ների շարքին: Լինելով սոցիալական գիտություն նա ունի իր—ուսումնասիրման առանձնահատուկը: Հոգեբանության, վորպես առանձնահատուկ գիտության, այն ե, վոր նա զբաղվում ե արտադրական հարաբերությունները կրող կոնկրետ մարդկանց հոգեկան և գիտակցական յերեվուկթների որինաչափություններով: Նա իր ուսումնասիրությունների հիմքում դնում է հետեւյալ սկզբունքները:

1.— Հոգեկան և գիտակցական յերեվուկթներն ամենից առաջ պատմական յերեվուկթներ են այնքան, վորքան նրանք փոփոխվում ու իրենց ձեվավորումն են ստանում արտադրական հարաբերությունների շրջանակներում: Ուստի և չպետք ե խոսել առհասարակ հոգեկան-գիտակցական յերեվուկթների, իրենի ինչ վոր վերացական, ժամանակից ու տարածությունից դուրս յերեվուկթների մասին, վորոնետեղ «մարդ հասկացողությունը վերացական հասկացողություն չի, այլ իր ամբողջության մեջ նա իրենից ներկայացնում ե հասարակական հարաբերությունների հանրագումար» (Մարքս):

2.— Հոգեկան և գիտակցական յերեվուկթների հիմքում Մարքսիզմի հիմնադիբներից ցուցումներից յելնելով մենք դնում ենք արտադրական հարաբերությունների շրջանակներում տարվող մարդկային աշխատանքը: Հոգեկան և գիտակցական յերեվուկթները ինչպես և ինքը մարդը աշխատանքի արդասիք են. «աշխատանքն ստեղծեց մարդին» ասում ե ենդեմը, հետեւյարար մենք պետք ե զրադիմնք մարդկային գիտակցության պատմական զարգացման ուսումնասիրությամբ հիմք ունենալով հասարակության անդամ աշխատող մարդու գիտակցության փոփոխումը աշխատանքային պրոցեսում:

3.— Հոգեկան յերեվուկթները ավելի լայն հասկացողություն են, քան գիտակցությունը, բայց չնայած դրան մենք հոգեկան յերեվուկթների մեջ գիտակցականին տալիս ենք հիմնական պրիմատ դերը. մնացած մյուս յերեվուկթները—հասարակու-

թյան անդամ կոնկրետ մարդու դաստիարակալին գիտակցությանը սպասարկու գարձնելով: Մենք գիտակցական լեռնելու բացատրելիս սկզբունք ենք ընդունում Մարքսի կողմից գիտակցության տրված հետեւլալ ընորոշումը: «Գիտակցությունը հատուկ է մարդուն, կենդանին չունի գիտակցություն»—«մարդու գիտակցությունը դա նրա ակտիվ գիտակից վերաբերմունքն եղեղի իրեն շրջապատող աշխարհը»: Մարդն իրեն, իրբեկ մարդ ճանաչելու, գիտակցելու պրոցեսը միայն այն ժամանակ է հանդիս գալիս, իբրև նա փոխարարելության մեջ և մտնում իր նման մարդկային ելակի հետ:

«Մարդն աշխարհ չի գալիս ձեռքին հայելի բռնած և վոչ ել իրեկ Փիլստեան փիլստոփա «յես իս եմ» պատգամով, ապա մարդը լուր արտացոլած պատկերը մի ուրիշ մարդու մեջ և տեսնում: Պողոս կոչված մարդի հետ, իրբեկ իրեն նմանվող մեկի հետ հարաբերության մեջ մտնելով և միայն, վոր Պետրոս անունով մարդը հարաբերում է հենց իրեն իրբեկ մարդի: Բայց սըստով Պողոսն եւ ինչպիս վոր կա լուր պողոսյան մարմնականությամբ, Պետրոսի համար զառնում և մարդ կոչված սեսի յերեվան գալու ձեվ» (Կարլ Մարքս «Կապիտալ» իրեն 21.):

4.— Հոգեկան և գիտակցական լեռնելությունների ուսումնասիրում ունի և մի այլ սպեցիֆիկ կողմ, վորը մենք չենք զըստնում սոցիալական մյուս գիտությունների մեջ: Առանձնահատուկը կայանում է նրանում, վոր հոգեկան յերեվությունները սոցիալական լինելով հանդերձ գործ ունեն և բիոլոգիականի հետ և խոշոր չափով ոգտվում են բիոլոգիական մի շարք գիտությունների (Փիլիոլոգիա, անատոմիա, ենսիլինոլոգիա, ուժիքսոլոգիա, ֆիզոլոգիական քիմիա և ալլն): Ոգտվելով այդ գիտություններից տեղ-տեղ նույնիսկ խոշոր չափով իհարկե հոգերանությունը չի կարող հաշվի չառնել այդ բնական գիտությունների կոնկրետ որինաչփությունները և իր առաջ չդնել ամենքից առաջ ֆիզիոլոգիականի և հոգեկանի փոխարարելությունների խնդիրը: Արինակ ասենք, թե մարդկային զգայնության մասին խոսելու և նրա պատմական լինելը ընորոշելիս մենք չենք կարող չծանոթանալ այն ներգալին մեխանիզմների որինքների հետ, առանց վորի մարդկային զգայնության մասին անկարելի յե խոսել: Առաջմ ընդգծենք այդ հանգամանքը շատ շուտով հոգեկանի և ֆիզիքականի պրոբլեմին ավելի հանգամանորեն անդրագանականության մամարդ:

5.— Զնալած նրան, վոր գիտակցությունը զուտ մարդկան իրեվութ և, մենք գիտակցական ապարատի գարգուցումը

տալու համար չենք կարող չոգտվել բարձր նլարդալին համակարգ ունեցող կենդանիների վարքի ուսումնասիրման նյութերի ոգտագործումից (Բինավորիստաներ Ամերիկայում, ու Փլեքսոլոգիական շկոլան ԽՍՀՄ-ում, պրոֆեսոր Բերիտավիլու «վարքի ուսմունշկուլա»), Զոոպսիխոլոգիայից և ալլն, իհարկե հանդիս բերելով հաքից», Զոոպսիխոլոգիայից և ալլն, իհարկե հանդիս բերելով համեմապատսխան քննադատական մոտեցում և պահպանելով համեմատության չափի զգացումը:

ՄԻՆՉ ՄԱՐՔՍԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒ ԲՆՈՐՈՇԻՉ ԿՈՂՄԵՐԸ

Զնալած նրան, վոր հոգերանությունը շատ հին գիտություն ե, այնուամենայնիվ կոնկրետ մարդուն ուսումնասիրող գիտությունը շատ անկատար և և բազմաթիվ հոգեկան լեռնելու շատ անկատար գիտությունը կամ համազեցուցիչ կերպով բացատրված գեռես ուսումնասիրված կամ համազեցուցիչ կերպով բացատրված գեռես ուսումնականությունը և փիլիոլոգիան չի կարող չեն: Նույնիսկ բժշկականությունը և փիլիոլոգիան զի կարող պարզենալ այս ուղղությամբ: Բուրժուական գիտնականները վորով առումով խոշոր աշխատանք են տարել բնությունը նվաճելու, բնական լեռնելությունների ուսումնասիրմանը գործում, բայց մարդու վերաբերմամբ այդ ուսումնասիրությունները թերի յեն, մարդու մակարդակությամբ այդ ուսումնասիրությունները թերի յեն, մարդու մակարդակությամբ համար հակագիտական: Պատմակատար, միակողմանի և մեծ մասամբ հակագիտական: Պատմակատար կայանում և հանդիս մարդու ունեցած այն իդեալիստական հակասոցիալական մոտեցման մեջ, վորը բնորոշ և համարյա առանց բացառության մինչ Մարքսյան հոգերանների համար: Բուրժուական գիտնականներին բոլորովին եւ չի հետաքրքի կոնկրետ հասարակարգության անդամ մարդու ուսումնասիրությունը:

Բուրժուական հոգերանությունն զրագիւլ և առնասարակ ժամանակից ու տարածությունից, պատմությունից գուրս քաշած, վերացական, իրականում իրեկ այդպիսին բոլորովին բացառություն չունեցող հոգեկան լեռնելությունների ուսումնասիրմամբ: Գոյություն չունեցող հոգեկան լեռնելությունների մարդու միայն միջավայրից այլ և փիլիքական մարմարով միայն միայն անդամում եյին մարմարությամբ: Հոգեկան լեռնելությունները վոչ միայն անջատում եյին մարմարությամբ միայն իրեկ լեռնելորդականի, անցողիկի, ժամանակավորի, լով միայն իրեկ լեռնելորդականի, անցողիկի, ժամանակավորի, լով այդպիսի իդեալիստական, վոչ գիտական բացատրումն իր չոգու այդպիսի իդեալիստական, վոչ գիտական բացատրումն իր միջամատություններում գալիս եր միջամատություններում հոգու և մարմնի ու հանդեր-

ձեալ կյանքի քրիստոնէական սկզբունքների հետ։ Տասնիներորդ դարի վերջերին բուրժուական հոգեբանությունը ընական գիտությունների զարգացման հետիվանքով ստիպված յեղավ վորոշ միասին յեղած իր ուսմունքի մեջ։ Պրոֆ. Վունդտի գլխավորած եքսպերիմենտալ հոգեբանության ներկայացուցիչները ստիպված յեղան, ընդգծել և ֆիզիկականի նշանակությունը, տալով ֆիզիկականին ինքնուրուցն առել։ Ըստ Վունդտի հոգեկան և ֆիզիոլոգիան յերեվույթները միմյանց հետ կապ չունեցող անկախ յերեվույթներ են։ Հակասություններից խուափելու համար եքսպերիմենտալ հոգեբանության ներկայացուցիչները ստիպված յեղան ընդունելու ֆիզիկականի գոյության փաստը, բայց մեկնաբանեցին, հոգու և մարմնի պրոբլեմը լուծեցին վոչ ճիշտ հիմնականում նորից ընկնելով իդեալիզմի գիրքը։ Վունդտը և նրա աշակերտները գտնում են, վոր գոյություն ունեն միմյանցից անկախ յերկու աշխարհներ։ 1. Հոգեկան աշխարհ։ 2. Մարմնային աշխարհ։ Յեթե—մենք տեսնում ենք, վոր միշտ հոգեկան և ֆիզիոլոգիական յերեվույթները միաժամանակ են հանդես գալիս, ասում են նրանք ապա այդ միաժամանակ լինելը բոլորովին ել չի խոսում նրանց փոխադարձ կապի ու միասնության մասին։ Գոյություն ունի այսպես կոչված պսիխոֆիզիոլոգիական պարակելիություն։ Թե վորն և հոգեկան և մարմնական յերեվույթների մեջ գոյություն ունեցող գուգահեռականության պատճառը, այս հարցը մնաց անպատճառահան։

Հոգեկանը և ֆիզիկականը, մարքսիզմը լուծում և հոգեկան և ֆիզիկականի պրոբլեմը, վորը հանդիսանում իր բուրում մինչ մարքսիստական հոգեբանությունների հակագիտական լինելու առանցքաքարը։ Հակառակ իդեալիստ հոգեբանների, վորոնք անջատում ենին հոգեկան յերեվույթները ֆիզիկականից և ուսումնասիրում այդ յերեվույթները «Հոգին» իբրեւ ամենակարող վարոշիչ ֆիզիկականից և կեցությունից անկախ յերեվույթ, Մարքսիզմը հոգեկան յերեվույթների հիմքում դնում և մատերիալ պրոցեսը, մարմնականը։ Ընդունելով հոգեկան յերեվույթների գոյությունը և նրա ուսումնասիրման անհրաժեշտությունը, Մարքսիզմը հոգեկան յերեվույթների հիմքում դնում և մարմնականը, իսկ հոգեկան յերեվույթը համարում մատերիալի գարգացման բարձրունքը Մատերիան իր շարժման, զարգացման ընթացքում քանակական և զորակական փոփոխությունների շնորհիվ ստանում և որգանական մատերիալի ձեվ, իսկ որ-

գունականի ավելի զարգացած բարձր արտահայտությունը դադիւծական կամ հոգեկան վորակն ե։

Հոգեկանն իրեկի մարմնական յերեվույթ նյութից անկախ գոյություն չունի այլ բարձր կաղմակերպված մատերիալի հատկանիշն ե։ «Հոգին» գիտակցությունը և այլ մատերիալի (այսինքն ֆիզիկականի) բարձր արդյունքն են, գունկցիան են մատերիալի այն հատուկ կտորի, վորը մարդու ուղեղ և կոչվում (լինին)։

Ընդունելով հոգու մարմնական լինելու հանգամանքը Մարքսիզմը հոգեկան յերեվույթը համարում և մատերիալի զարգացման կոնկրետ վորակի վրեւեվ կազմակերպված մատերիալի բարձր արտահայտություն ունի իր զարգացման ուրույն կոնկրետ որիշաչափությունները, հետեւաբար և պահանջում և ուսումնասիրման առանձնահատուկ մոտեցում։

Ժառանգականի և սոցիալականի պրոբլեմը։ Խորհրդային հոգեբաններից ու մանկարաններից վոմանք կարծում են, վոր մարդու վարմունքի ձեվավորման գործում դեր են խաղում 2 հիմնական հատկանիշներ։ 1) Զեռք բերովի կամ սոցիալական — 2) բիոլոգիական կամ ժառանգական։ Ըստ այդ գիտնականների՝ բիոլոգիականի և սոցիալականի փոխազդեցությունը պայմանավորվում է մարդու վարքը։ Զնայած վոր այդ գիտնականները բացի պատարգիական զեպքերից զամինանալը, գերակշռողը տալիս են սոցիալականին, բայց յերկու տարբեր ֆակտորների փոխազդեցության մասին խոսելիս ընկնում են մեխանիզմի և նույնիսկ հավասարակշռության տեսության գիրքը։ Բանն ել նրանում և, վոր ճիշտ չի լինի մարդու վարքի մեջ գտնել յերկու տարբեր ֆակտորների փոխազդեցությունը, վորովհետև յեղած բիոլոգիական ժառանգական հատկանիշները սոցիալական միջավայրի ազգեցության տակ ալնպես են կաղապարվում, ձևվագրվում, կողմնորոշում, վոր արդեն խոսել ալստեղ — ինչ վոր առանձին բիոլոգիականի և առանձին սոցիալականի մասին անհնար կլինի, բիոլոգիականի և սոցիալականի մեջ վոչ թե կա մեխանիկական փոխազդեցություն այլ դիալեկտիկական միասնություն-սոցիալականը այնպես և կաղապարում ձեվավորում ժառանգականը, վոր այլեվս չի կարելի խոսել տարբեր ֆակտորների մասին։ Սոցիալականի և բիոլոգիականի փոխազդեցությունը կարելի յի ձեվակերպել Մարքսիստ-փիլիսոփա վիշնակու խոսերով։ «Սոցիալական ազգեցություն բիոլոգիական տվյալների ձեվով»։

ԻՆՉՊԵՍ ՄԱՐԴԱՆՄԱՆ ԿԱՊԻԿԸ ՄԱՐԴ ԴԱՐՁԱՎ.

ՄԱՐԴ ՅԵՎ ԿԵՆԴԱՆԻ

Մեր դասընթացի նպատակը չի մանրակրկրիս կերպով վերլուծելու այս խնդիրները, բայց համառոտ կերպով անպայման անհրաժեշտ ե կանգ առնել այն հիմնական հատկանիշների վրա, վորով մարդը տարբերվում ե կենդանուց:

Ենգելով, կապիկի մարդ զատնալու հիմնական պատճառը համարում ե աշխատանքը «աշխատանքը ստեղծեց մարդին»: Մարդանման կապիկը վորոշ պայմանների, հատկապես այն բնական միջավարի շնորհիվ, վորի մեջ ստիպված յեղավ ընկնել իր փիզիոլոգիական կառուցվածքով, հատկապես ուղեղով իր ժամանակին անշուշտ բարձր եր կանգնած նյարդային համակարգ ունեցող մրու կենդանիներից: Այս հանդամանքը բարենպաստ հող եր ներկայացնում իրենից: Բայց փիզիոլոգիական համեմատաբար բարձր զարգացման աստիճանի հասած կապիկը դեռ ևս մարդ չեր: Նա մարդ զարձավ միայն այն ժամանակ, յերբ կարողացավ զործիքներ պատրաստելու այդ գործիքներով բնության վրա ազդել, այսինքն աշխատել և աշխատանքի պրոցեսում վոխահարաբերության մեջ մտնել իր նման եյակների հետ: Այսպիսով աշխատանքը մարդի համար միայն սոսկական կարիքները բավարարելու նշանակությունը չունի: Աշխատանքը, զործիքներով աշխատելին այն հիմնական հատկանիշն ե, վորը մարդանման կապիկին մարդ զարձրեց և ուսումնասիրել մարդուն կոնկրետ աշխատանքային պրոցեսից գուրս, այսինքն արտադրական հարաբերություններից անկախ, կինը անհիմեթություն:

Աշխատանքի, պրակտիկայի շնորհիվ ազդելով բնության վրա մարդը դրանով վոչ միայն բավարարում ե իր անմիջական կենսական կարիքներն այլ և ավելի հարսացնում իր ճանաչողությունը: Հասարակության և բնության փոխազդեցության պրոցեսում ե միայն, վոր մարդը կարողանում է յերեվան նանել իր համար մինչ այդ անհայտ բնության գաղտնիքները: Աստիճանաբար պրակտիկայի պրոցեսում տիրապետելով, հասկանալով բնության որենքները, կատարելագործելով, հարսացնելով միջավայրի մասին ունեցած զիտակցությունը, զինվելով այդ զիտելիքներով մարդը ել ավելի կատարելագործված կերպով ե աղդում բնության վրա և ազդեցության պրոցեսում նորից ու նորից կատարելագործում ե իր գիտակցությունը, կատարելագործում իրեն իրել մարդի: «Ազդելով բնության վրա, փոխելով

բնությունը մարդը բնության փոխվելու հետ միասին փոխում ե իր բնությունը» (Մարքս): Ի՞արկե կենդանական աշխարհն ևս բնության փոխելու գործում հակայական գեր և խաղում, ևս բնությանու կողմից բնության փոփոխությունը չի կատարված ծրագրված նպատակահարմար ակտիվ կերպով և կենդանու մոտ յերբեք բնության և կենդանու փոխվելու պրոցեսու միաժամանակ չի կատարվում: Կենդանին փոխվում ե միայն բնության փոխվելուց հետո: Մարդու և կենդանու մեջ այս ինդրում հիմնական տարբերությունն այն ե, վոր կենդանին գործիքներով չի ազդում բնության վրա:

Փրակտիկայի միջոցով բնության որինաչափությունների ձանաչման շնորհիվ մարդը հնարավորություն ունի ծրագրված պլանալին աշխատանք կատարելու, Մարքսը նույնիսկ ամենավարապետի և մեղվի կատարած աշխատանքի մեջ այն վարտարապետի և մեղվի կատարած աշխատանքի մեջ այն տարբերությունն ե տեսնում, վոր մինչդեռ մեղուն անգիտական աշխատանքը և հյուսում իր մեղքամումալին խարիսխը, մարդը մինչև ցարար և հյուսում իր մեղքամումալին խարիսխը, մարդը մինչև տուն կառուցելը արդեն իր ուղեղի մեջ ունի կառուցած այդ տան պլանը:

Մարդը հասարակական կենդանի լի աշխատանքի պրոցեսում մարդը իրեն ճանաչում ե իրեվի մարդ միայն այն գեպքում, յերբ վոր հարաբերության մեջ և մտնում իր նման հեակի հետ: Կենդանին հասարակություն չի, կազմում և լիթե հասարակությունների մենք թյուն հիշեցնող վորոշ կենդանական խմբակցությունների մենք թյուն կություն ենք, այդ խմբակցությունները պատահական ժամանականությունում ենք, և վոր հիմնականն ե, յերբեք ել իրենց կավոր բնություն կությունում իր հիմնական պրոցեսու: Դրա համար ել ունի միքում չունեն աշխատանքային պրոցեսու: Դրա համար ամենք ամենքից առաջ՝ պետք ե վերը սումնասիրելով մարդուն մենք նրան ամենքից առաջ՝ պետք ե վերը նենք նրան աշխատանքային պրակտիկայի գործունեության մեջ և հոգեբանությունը ուսումնասիրենք իրեվի կոնկրետ հասարակական հարաբերությունների արդյունքը:

Աշխատանքային պրոցեսի շնորհիվ պրակտիկայի ընթացքում մարդը կարողանում ե գարերի փորձի հետեվանքով կատարելագործել, նոր վորակի հասցնել աշխարհաճանաչողության կարելագործել, հատկապես նորա կեղեկալին մասը: Եթե վոր որգան գլխի ուղեղը, հատկապես նորա կեղեկալին մասը: Գլխի ուղեղը մարդու գիտակցության հիմնական զենքն ե, նորա շնորհիվ մարդը լինելով անցության հիմնական զենքն ե, նորա շնորհիվ մարդը լինելով անցության փորձից կարողանում ե կանխատեսնել ապագալում տեղիյալի փորձից կարողանում ե իմանալով այդ ծրագրված ունենալիք բնական յերեվակալքները և իմանալով ակտունական արմար վորոշում հանել գալիք յերեվոյթին ակտունական արմար վորոշում դիմավորելու համար: Շնորհիվ այսպիսի կատիվ ու պատրաստ դիմավորելու համար:

բեկոր որդանի մարդը կարողանում է ակտիվ կերպով հարմարվել բնությանը: Արինակ՝ մեզանից ամեն մեկը արդեն նախորոք պատրաստվում է սոսկալի ձմռան ցրտերին զիմավորելու համար: Գլխի ուղեղը այն հիմնական շահմարանն է, վորի մեջ ամբարվում և մարդու պրակտիկայի վողջ փորձը—այդ պրակտիկան ել ավելի արգասավոր ու ազդու դարձնելու համար: Գլխի ուղեղի կեղեկային մասը իրենից չի ներկայացնում անփոփոխ մի մարմին, այլ հանդիսանում և պատմական զարգացման արդյունք և փոփոխվում հարստանում ու ավելի լի կատարելագործվում մարդու պրակտիկայի ընթացքում—ինարկե մեր բոլոր զգայարաններն ել ունեն վորոշ թերություններ: պրակտիկան զինում և մարդուն ու ամենակարող ու հատու դարձնում նրա զգայարանները: Ենդեւը գտնում է, վոր մարդու տեսողության զգայարանը գուցե և վորոշ գեղքերում հետ և մնում ասենք մրջունի նույնպիսի զգայարանից: մրջունը տեսնում և ուլտրամանիշակագույն ճառագայթները մարդը չի տեսնում, բայց այն հանդամանքը, վոր մարդը կ բողացել և ապացուցել մրջունի կողմից մանիշակագույն ճառագայթները, տեսնելու հանգամանքը այս փաստը ինքնըստինք ան խոսում և մարդու զգայարանի ամենակարող լինելու մասին: Պրակտիկան է, վոր ամենակարող ու հատու լի զարձնում մեր զգայնությունը—որինակ՝ մանրադիտակի զյուտը բազմաթիվ սնգամ մեծացրեց մեր աչքերի կարողությունը:

Մարքսը մարդու ճանաչողության և կենդանու ճանաչողության մեջ այն հիմնական տարրերությունն է գտնում, վոր մարդը ալ կերպ չի կարող պատկերացնել բնությունը, լիթե վոչ միայն փոխարարերության պրակտիկայի մեջ, մարդու և բնության, ինչպես և մարդկանց իրենց փոխադրեցության պրոցեսում:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՍՊԱՐԵՉՆԵՐԸ.—

Հոգեբանությունը ուսումնասիրում և մարդկային հոգեկան պրոցեսները վորոշ կոնկրետ նպատակների համար: Այնքան բարդ է ու բազմակողմանի մարդկային գործունելությունը, վոր լիրը խոսում ենք կիրառյալ նպատակների մասին, մենք ամենից առաջ պետք ե շեշտենք թե այդ գործունելության վոր ասպարեզում և, վոր ուղում ենք կիրառել մարդու հոգեբանական ուսումնասիրման շնորհիվ լիրեկան հանված որինաչափությունները: Էնդհանուր հոգեբանության նպատակն է զաղափար տալ առնապարակ հոգեկան յիրեվութների մասին, մեր կուրսը ձգտում է այդ հիմնական նպատակին, բայց կաշխատենք հնարավոր յեղած

չափով կոնկրետ կերպով մեր ուսումնասիրության տվյալները ոգտագործել մանկավարժական պրոցեսի ու աշխինալացման գործում: Այսինքն վորոշ չափով ծանօթություն տանք մանկավարժական հոգեբանության մասին: Ուսուցիչը գործ ունի մարդկային մատերիալի հետ, վորոնց վրա պետք է ազդի նրանց աշխարհաճանաչողության գործն ավելի հարստացնելու, դիտության տվյալներով նրանց միտքը զինելու համար: Ուսուցիչը ճիշտ կերպով կարող է փոխազդել աշխարհաճանաչը վրա միայն այն դեպքում, լիրը կը կարողանա ճանաչել այն հիմնական հոգեբանական ապարատները, վորոնց շնորհիվ հարավոր և լինում ըմբռնողությունը և հետո կարիք յեղած դեպքում յուրացրած նյութի վերաբարդությունը: Հոգեբանության տվյալները կողնեն մանկավարժին ավելի ուսցիունալ կերպով դնելու ուսուցման գործը:

Հոգեբանությունը կարելի լի ոգտագործել նաև այսպես կոչված պսիխոտեխնիկայի ասպարիզում: պսիխոտեխնիկայի առաջ դրված յերեք հիմնական խնդիրները՝ պրոֆ. ընտրությունը, պրոֆորիենտացիան և պրոֆկոնսուլտացիան նպատակ ունեն յերեան հանելով աշխարհաճանաչը այս կամ այն պլրոֆեսիալի հանգելու ունեցած ընդունակությունները, կաղըբը նպատակահարմար բաշխում կատարել այն հաշվով, վոր աշխարհաճանաչը պոլիտեխնիկական դպրոցի ավարտման վկայականի հետ միասին ստանա և գնահատական այն մասին, թե նրա հոգեկան ընդունակությունները մարդկային գործունեյության վոր ասպարեզում ավելի նպատակահարմար կերպով կարող են ոգտակար լինել (ինժեներ, շոփեր, տրակտորիստ, մանկավարժ, բժիշկ, ագրոնոմ, մեքենավար և այլն):

Արվեստի ասպարիզում նույնպես մարդկային հոգեկան մեխանիզմի ճանաչումը անհրաժեշտ է ամեն մի արվեստագետի համար: Ինչպես, ինչ կերպ տալ փեղարկեստական ստեղծագործությունը, վորպեսզի նա հասնի մասսային—ազդի մասսայի վրա, վորպեսզի արվեստագետը կարողանա հասնել այն նպատակին, վորին նա ձգտում է տվյալ ստեղծագործական պրոցեսի միջոցով: Կամ այնպիսի մի ինդիք, ինչպիսին և ճարտարապետությունը, ինչպես կառուցել շենքը, ինչպես զարդարել—ինչ ներկուվ ներկել, վորպեսզի անհատը իրեն ավելի լավ զգա տվյալ շենքի մեջ, զգա, վոր նա հանդիսանում է Խորհրդակային շինարարության տերն ու տիրականը, նրա մասնակիցը:

Հոգեբանության տվյալները կարելի լի ոգտագործել և գատական պրակտիկայի ասպարիզում: (Վորոշ ինդիքներում), որինական պրակտիկայի ասպարիզում:

պարզելու, թե իսկապես դատվողը մասնակից յեղել և հանցանքին թե վոչ հանցանքը կատարել և գիտակցված, թե անզիտակից վիճակում համար կարեռ նշանակություն ունեն. վկա էի մասին. — Հավատալ վկալին թե վոչ. ինչպիսի վկալությունների կարելի յե հավատալ. յերեխայի վկայությանը կարելի յե հավատաւ թե վոչ և այլն նման խնդիրներ։ Տ-ը դ հնդամյակը դաստկարգերի վերացման, «մարդը մարդուն գալլ ե» սկզբունքի վերացման սոցիալիստական աշխատանքի շնորհիվ խիստ կերպով փոխվում ե բանվորի և կոլխոզնիկի հոգեբանությունը. հետեւ այդ հոգեբանության փոփոխմանը, պարզել գիտակցության մեջ հնի մնացորդների վերացման խնդիրները, ոժանդակել այդ պատճառին և այլն. այսպիսով մենք տեսնում ենք, վոր հոգեկան յերեխութների ուսումնասիրությունը հետապնդում ե սոցիալիստական շինարարության համար շատ կարեռ խնդիրներ, վորոնց կոնկրետ իրագործմանը յուր մասնակցությունն ե բերում և հոգեբանությունը:

ՊԱՅՄԱՐԸ ՅԵՐԿՈՒ ՓՐՈՆՏՈՒՄ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐՈՒՄ. —

Դերորինյան մենչեկող իդեալիզմի փիլիսոփայական շկումն իր խորը ազգեցությունը թողեց գեռ ևս նորակազմ մարքսական հոգեբանության վրա. Խորհրդային հոգեբանության ֆրոնտի նախկին ղեկավար Կոստանդին Նիկոլայևիչ Կոնդիրյանի վեհակառուցել հին իդեալիստական հոգեբանությունը, որին ղեկավար ընկավ հակամարքուստական իդեոլոգիաների գիրկը և Մարքսիստական հոգեբանության փոխարեն մեզ տվեց մի ուսմունք, վորը վերջին հաշվով ընդհանուր վոչինչ չունի Մարքսիզմի հիմ:

Ըսկեր լենինը Խորհրդային գիտնականների հիմնական խնդիրներից մեկն և համարում բուրժուական ժառանգության Մարքսիստական մշակումը, բուրժուական գիտական մտքի տըգլաների քննադատորեն յուրացումը. նշելով այդ հիմնական խնդիրը ընկ. լենինը նշում եր, վոր բուրժուական ժառանգությունը քննադատորեն կարելի յե մշակել միայն այն ղեպքում, յերբ կանգնելով պրոլետարական դիրքերի վրա, ուսումնասիրության հիմքում դնենք Մարքսիզմը, պրոլետարիատի աշխարհահայցք՝ գիտեկտիկական մատերիալիզմը. Պրոֆեսոր Կորնիլովը կանգնած լինելով պրոլետարիատի տեսակետի վրա, չկարողացավ

հասկանալ այն հիմնական նշանակությունը, վոր ուներ դիալեկտիկական մատերիալիզմը խորհրդային գիտնականի ստեղծագործության վող պրոցեսի համար:

Փոխանակ Մարքսիզմը յուր աշխատանքների հիմքում գընելու, կորնիլովը Մարքսիզմը, դիալեկտիկական մատերիալիզմը համարում և միայն իրեւ հոգեբանության մեթոդներից մեկը, համազոր հոգեբանության մյուս մեթոդներին, ինչպես որինակ որբեկտիվ զիտողականության, անկետաների և այլն. Այս հանգամանքը, ճակատագրական հանդիսացավ Կորնիլովի համար:

ԿՈՐՆԻԼՈՎԻ ՌԵԱԿՏԱԼՈԳԻԱԿԱՆ ՇԿՈՒՅՑԻ ՃԻՄՈՒՆՔՆԵՐԸ. —

Կորնիլովը չկարողացավ հրաժարվել այն իդեալիստական հասկացողությունից, վոր կար հոգեբանների մեջ հանգեց մարդը. ինչպես վերեւում շեշտեցինք, հին հոգեբանները մարդուն ուսումնասիրում ելին վոչ թե իրեւ սոցիալական եակի, կոնկրետ հասարակության անդամի, վարն ոժտված և գիտակցությամբ և իրեւ այդպիսին խորը կերպով տարբերվում ե կենդանիներից, այլ միայն իրեւ հասարակությունից գուրս կենդանի անհատի:

Կորնիլովը կարծում եր, վոր մարդու վաղջ վարք ու բարքն իրենից ներկայացնում ե ուեկցիաների հանրագումար. հոգեբանության մեջ ուսակցիա ասելով, հասկանում ենք առհասարակ կենդանու պատասխանը արտաքին աշխարհի տված գրգիռներին. Մարդկային վարք ու բարքը վողջ մարդկային ելությունը բացատրելով միայն սոսկ ֆիզիոլոգիական ուսակցիաներով, ինքնստինգան Կորնիլովը վորքան ել ուղենար չեր կարող հասկանալ այն սպեցիֆիկումը, այն յուրահատուկը, վորով մարդը իրեւ սոցիալական կենդանի, իրեւ մատերիալի զարգացման նոր վորքակ, տարբերվում և մյուս կենդանիներից. չե վոր ուսակցիան նույնն ե և մարդու և կենդանիների և նույնիսկ ավելի ցածր աստիճանի վրա գտնվող կենդանիների մոտ. հավասարության նշան գնելով մարդու և կենդանու մեջ, նշանակում և հրաժարվել մարքսիզմի սկզբունքներից. Փոխանակ մարդուն ուսումնասիրելու բնության ու հասարակության հետ անդամար ունեցած փոխազեցության մեջ, կորնիլովը գտնում եր, վոր հիմնականում մարդու և բնության մեջ կա վորոշ հավասարակշռություն և ալդ հավասարակշռությունն ե պայմանագորում մարդու վարք ու բարքը. հավասարակշռության խախտումը և ղեպի վեր, այսինքն յերբ մարդը հաղթում և բնությանը, և ղեպի ցածր, յերբ մարդն

անդոր և բնության քմահամույքների հաճգեպ, կորնիլովը համարում և բնության և մարդու մեջ յեղած հավասարակշռության խախտում, իբրև այդպիսին հոգեկան աննորմալ ախտաբանական յերեւութ. Կորնիլովի «Մարքսիստական» հոգեբանության հիմքում ընկած և հավասարակշռությունների տեսությունը, վորը ընկ. Ստալինի խոսքնով ասած, վոչինչ ընդհանուր չունի մարքսիզմի հետ:

Վոչ ձիշտ, հակամարքսիստական մեթոդով գիտական կիրառումը կորնիլովին հասցնում է որեւէտիվորեն հականեղափական ալն-պիսի մի տեսակետի, ինչպիսին և եներգիայի միբեվեռյալ գործադրաման որենքը. մանրամասնորեն չվերլուծելով արդ որենքը, մենք միայն կասենք այն, վոր կորնիլովը հաճգում եք արդ որենքում այն լեզրակացության, վոր մարդը ընդունակ և միայն մի տեսակ աշխատանք կատարելու—կամ ֆիզիկական կամ մտավոր. վոր արդ յերկու աշխատանքները չեն կարող գուգակցվել, միանաբար հանդես գալ: Ինչ խոսք, վոր կորնիլովի այդպիսի «Գիտական» լեզրակացությունները վոչինչ ընդհանուր չունեն մարքսիզմի հետ և որեւէտիվորեն ջուր են լցնում զասակարգացին թշնամու ջրաղացի վրա:

Խորհրդային այլ հոգեբանների անքննադատորեն մոտեցումը բուրժուական հոգեբանության նվաճումներին և նրանց մեխանիկական կիրառումը հանգեցրեց այնպիսի հակագիտական յեղակացությունների, ինչպիսին որինակ պըռփեսոր կեվիլովի յեզրակացությունն ե: Պրոֆ. Լեվիտովը մեխանիկորեն փոխադրելով հոգեկան հատկությունների ուսումնասիրման ամերիկյան մեթոդները խորհրդային հողի վրա, առանց հաշվի առնելու ուսումնասիրվողի սոցիալ-կենցաղային, կուլտուրական պայմանները, յեկավ այն յեզրակացության, վոր մտավորապես ամենասոժագած տարբեր դա ծառայողներն են, իրենց մտավոր հատկություններով «ավելի հետ են մնում բանվորները, իսկ մտավոր ընդունակությունների ասպարիզում գլուղացիների և ծառայողների մեջ մի ամբողջ անդունդ և ընկած»: Մի շարք այլ պսիխոտեխնիկներ իրենց «որյեկտիվ» ուսումնասիրություններով նույնիսկ հանեցին այնպիսի մի կուրլող յեզրակացություն, ինչպիսին որինակ աղջիկների տեխնիկական ընդունակությունների չափազանց հետ մնալու եր տղաներից, Սոցիալիստական շինարարության պրակտիկան ցույց տվեց, վոր բանվորությունը, գլուղացիությունը, առանց սեսի խտրության, ակտիվ ու միացյալ ուժերով մասնակցում են սոցիալիստական շինարարու-

թյանը, իսկ շատ գեղեցիրում աղջիկները զերազանցում են տղանիբն թեկուզ և իրենց ահեխնիկական զիտելիքների տառարիդում ունեցած ընդունակություններով: Պրոֆեսոր Ալեքսանդր Ռոմանովիչ Լուսիան ուսումնասիրելով ուզբեկների մտածողության պրոցեսները, հանգել եր ըստ ելության բուրժուական հականեղափական լեզրակացության, վոր ուղղի հնիրի մտածողությունը շատ պրիմիտիվ և և իրենց պրիմիտիվությամբ շատ ավելի հետ և մնում քան ուսումներինը. մինչդեռ փաստերը ցույց են տալիս, վոր վոչ միայն ուզբեկը, թուրքմենը, եսկիմոսը, նեմիցը, մոլդավը, հայը, ուսումների հետ միասին սովորում են հավասար հաջողությամբ և հավասար մտավոր ընդունակություններ հանդես բերելով: Բարանովը ուսումնասիրելով Բագվի վագոնավարներին, հանգել եր նույնպես ըստ ելության հականեղափական և սոցիալիստական շինարարության պրակտիկան լուսած ամբողջովին հերքիլած այն յեզրակացությանը, վոր թուրքից հետից վագոնավար զուրս չի զա, վոր միայն սուսները կարող են լինել լավ վագոնավար: Այս «գիտնականների» ուսումնասիրությունները ինքնըստինքան չուր երին լցնում դասակարգավորն թշնամու ջրաղացին և թեկուզ որդեկտիվորեն ծառացում հականեղափական զործին: Թի Մարքսիզմից հեռանալը, պատմական մտահրախիլզը հոգեբանական ուսումնասիրությունների հիմք չընդունելը ինչպիսի հետևանքների կարող և հասցընելը, ապացուցում և մանկաբան Զալիկինդի որինակը: Զալիկինդը իր ժամանակին չափաղանց շատ տարվել և Յեվրոպայում մողաց գրածած փրեկիդի ուսումնական գործումը յերեվությունների ուսումնասիրությունը փոխանակ մարքսիզմի զինքով յամարտելու, կատարել փրեկիդի զինքով: Հայ հոգեբաններից ընկ. Գուրգին Եղիկյանը հեռակա մանկավարժական դասընթացը համար գրած իր հոգեբանական առաջադրություններում ուժի կերպով տուրք եր ավել փրեկիդիմին, այսակա շեշտենք նախակ կերպով տուրք եր ավել փրեկիդիմին: այն հանգամանքը—վոր կին ֆրեյզերի վերլուծմանն անցնելու այն հանգամանքը—վոր կին ֆրեյզերի վերլուծմանն անցնելու անդինիկան միսար Տրոցկին, չափաղանց տարինքը հականեղափական միսար Տրոցկին, չափաղանց տարինքը փրեկիդով, հոգեբանների առաջ ինդիք եր դրել—Մարքսիզմի գիտական հոգեբանություն կառուցել փրեկիդիմի հիմունքների սիստական հոգեբանություն կառուցել փրեկիդիմով տարվելու հետեւ կը մասնական գիտական հոգեբանություն գիտականների փրեկիդիմով տարվելու համար, համառոտորեն ծանոթանանք փրեկիդիմով տարվելու համար, համառոտորեն ծանոթանանք պարզելու համար, համառոտորեն ծանոթանանք փրեկիդմի հետության հետ:

Ֆրեկիզմի ելությունը.—Ֆրեկիզմը ժամանակակից բուրժուական ուսումնակացիոն մտքի հիմնաքարն և կազմում: Բուրժուական ուսումնակացիոն մտքի հիմնաքարն և կազմում:

ժուական փիլիսոփիայությունը, հոգեբանությունը, գրականությունը, բժշկականությունը, մի խռագով բուրժուական վողջ կուլտուրական միտքը իր հիմնավորումն և դոնում Ֆրեյդի ուսմունքի մեջ:

Ֆրեյդը ավատրիական խոշոր հոգեբանն է: Նո իր ուսումնասիրությունների ընթացքում հանգեց այն լեզրակացության, վոր մարդկային հոգեկան-կրանքի հիմքում ընկած և անգիտակցական կյանքը-այսինքն մի այնպիսի կրանք, վորը տեղի յեւ ունենում մարդու գիտակցությունից անկախ և յերբեք չի կարող գիտակցվել:

Գծաւական կենսական նշանակություն ունեցող մոմենտում, անգիտակցականը անպայման լերեան և գալիս և պայմանավորում մարդու վողջ վարք ու բարքը: Պատերազմոր խոսքերով ասած, մարդկային կյանքը նման և ջրում գտնվող մի տախտակի, վորի $\frac{3}{4}$ -ը գտնվում է ջրի տակը, (անգիտակցի իմաստով) և միայն մի քառորդն է, վոր գտնվում է ջրի յերեսը: Սոցիալական կրանքը, մարդու դասակարգային պատկանելիությունը, նրա կրթությունը կարելոր չեն. ամենավճռական մոմենտներին ալդ նախական, անփոփոխ, կենդանական անգիտակիցը միշտ իրենց յերեան և բերում և պայմանավորում մարդուն Ֆրեյդը իր ասածներն ապացուցելու համար բերում և այսպիսի մի որինակ՝ «Մազրիդի թատրոններից մեկում հավաքված եր քաղաքավարական նուրբ կանոնների մեջ դաստիարակված, արհստոկրատ ամենանըբին հասարակություն, վորը ամենայն ջանասիրությամբ աշխատում եր պահպանել քաղաքավարության բոլոր կանոնները. հանկարծ թատրոնում սկսվում է հրդեհ և անասնական ինքնապաշտոպանության ընազգից զրդված վողջ կրթված, կարելի յեւ ասել մոր կաթի հետ քաղաքավարության կանոնները ներծծած հասարակությունը, մոռանում և ամեն ինչ և իրար կոխոտելով անասունի նման աշխատում և դուրս պլընել ազատելով իրենց կյանքը, այսպես և կյանքի յուրաքանչյուր վճռական մոմենտին, լեզրակացնում և Ֆրեյդը, անամնականը զա հիմնականն եւ վորշոշիչը, անփոփոխ, ամենաուժեղը. մարդկայինը յերկրորդական եւ, թույլ և շատ քիչ նշանակություն ունեցող Ֆրեյդի ուսմունքի շրջը հիմնական կիոր կայանում է նրանում, վոր նա անգիտակցականի հիմքում և զնում սեկուլար սեռական ընազգը, ըստ Ֆրեյդի, մարդկային վողջ կյանքը սկսած նորածին յերեխայից մինչեւ զառամյալ ծերը պայմանավորվում և միայն մի ամենակարող, ամենահզոր ընազգով—զա սեռական ընազգն եւ:

Ենթեխան ծնվելուց հետո վոչ վոքից չսովորելով, անգիտակ-

ցարար շարժում և շրթունքները և հետո կպչելով մոր ստինքներին սկսում և աղանձաբար ծծել, սա սեռական ընազգն եւ ասում է Ֆրեյդը, մեծահասակների համբուլը նախատիսություն վարդովնետե շրթունքները շարժելով լերեխան սեռական հաճույք և ստանում: Նորածին լերեխան իր զարգացման առաջին ամիսներում չափազանց շատ և սիրում խաղալ իր մարմնի զանազան մասերի հետ, սա սեռական ընազգն եւ ասում է Ֆրեյդը, վորը առաջմա կրում և այնպիսի ընույթ, վոր լերեխան իր հաճույքի առարկա յեւ լնտրում իր սեռական մարմինը: Յեվ այսպիսի «գիտական» ուսումնասիրություններով Ֆրեյդը հանդում և բավականին տարորինակ, վոչ մի հիմք չունեցող լեզրակացությունների սեռական բնազգի ամենակարող լինելու մասին նույնիսկ մանկական հասակում: Մենք կարող ենք այստեղ Ֆրեյդին առարկել: Չե՞ վոր լերեխայի շրթունքների շարժելով լերենք եւ սեռականի ապացույցը չի, այլ պարզուեն արտահայտում և մնվելու ցանկությունը, յերեխայի, ինչպես և մեծի համար, սնվելու հիմնական պրոցերը յա լերեխայի իր մարմնի մասերի հետ խաղարթունքներն են, վոր լերեխայի իր մարմնի մասերի հետ խաղարթունքներն են, վոր լերեխայի աշխարհաճանաչողության առաջին փորձերն են, վորն անշուշտ սկսում եր մարմնից:

